Արձանագրություն N 2

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/15>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

10 հունվարի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Հարությունյան

Ե. Դոլբակյան

Քարտուղար՝ Վ. Ղազարյան

1. << ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/15>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2022թ. հունվարի 10-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2022թ. հունվարի 11-ին, ժամը 10:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2022թ. հունվարի 12-ին, ժամը 14:30-ին:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/15>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

12 հունվարի 2022թ.
Ժամը՝ 14:30

6. << ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/15>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2022թ. հունվարի 11-ին, ժամը 10:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	Բի Լայն ՍՊԸ	ք. .Երևան, Խանջյան 50, հեռ. (+374 10) 57-88-25
2	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2, հեռ. 010 54-43-48, 095 51-99-17
3	Յուքոմ ՓԲԸ	ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4, հեռ. 095555054
4	Տումոե ՍՊԸ	ք. Երևան, Անդրանիկի 4/8, Հեռ. +44 7412500203

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման նպատակով հատկացված գինը	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկները (ՀՀ դրամ)*							
					Բի Լայն ՍՊԸ		ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ		Յուքոմ ՓԲԸ		Տումոռ ՍՊԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	համակարգչային պլանշետ	հատ	2550	267750000	222411000	266893200	229673400	275608080	500000000	600000000	1200000000	1440000000

*Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը

9. Համակարգում **ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ**-ի, **Յուքոմ ՓԲԸ-ի** և **Տումոռ ՍՊԸ** կողմից ներկայացված հայտերը աճուրդի ամփոփումից հետո համակարգը ավտոմատ մերժել է, քանի որ ներկայացված գնային առաջարկները գերազանցել են գնման հայտով սահմանված գինը:

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում **Բի Լայն ՍՊԸ** -ն:

11. Հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

12. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/15>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել **Բի Լայն ՍՊԸ** -ին:

13. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

14. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ռ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Հարությունյան

_____ Ե. Դոլբակյան

Քարտուղար՝ _____ Վ. Ղազարյան